455 Ողջ տիեզերքում չկա այլ Աստված, ալելուիա՛,

1. Ողջ տիեզերքում չկա այլ Աստված, ալելուիա՛,
Դու ես միակ կենդանի Տեր Աստված, ալելուիա՛,
Քո զորությամբ ենք առաջնորդվում,
Դու ես փրկության մեզ տանում:

Ալելուիա՛, օվսաննա՛,
Փառաբանություն Քեզ, Հայր Եհովա:

2. Սերն ու Լույսն ես այս կյանքի, ո՛վ Աստված,ալելուիա՛,
Վեմն ես ճշմարիտ մեր ճանապարհի, ալելուիա՛,
Հավատքի կյանքով պիտի ապրենք,
Որ սուրբ խորանումդ բնակվենք:

3. Պիտի պատմենք Քո մասին, Հայր Աստված, ալելուիա՛,
Տարածենք խոսքդ սուրբ, աստվածային, ալելուիա՛,
Մեր աղոթքներում հարատևենք,
Որ օրհնությունդ վայելենք: